

ԳԼՈՒԽ ԽԶ.

1 Յաղագս Շապստան տակառապետին, որ եկն հինգ հարերը բիւրուն ի վերայ աշխարհին Յայոց. ապա եւ զնոսա հարկանէին սատակէին զաւրթն Յայոց:

2 Շապստան տակառապետն գայր հասաներ հինգ հարիւր բիւրուն ի վերայ աշխարհին Յայոց, եւ կամեր մտանել յաշխարհն Յայոց: 3 Ապա կազմեալ պատրաստեալ գունդն զաւրաց թագաւորին Յայոց, եւ Վասակ զաւրավարն Յայոց, ելաներ ի դիմի հարկաներ զաւրացն Պարսից: 4 Յարկանէին կոտորէին զգաւրսն Պարսից, եւ սպանանէին զՇապստան տակառապետն Պարսկաց: 5 Բայց միայն փախչէր Մերուժանն, ապրեալ լինէր:

ԳԼՈՒԽ ԽԷ.

1 Յաղագս Մոգաց հանդերձապետին՝ որ գայր հասաներ ութուտասն բիւրուն, տալ ճակատ ընդ թագաւորին Յայոց. եւ սա կործանէր իբրեւ զառաջինսն:

2 Ապա եւ Մոգաց անդերձապետն գայր հասաներ ութուտասն բիւրու, տալ ճակատս ընդ թագաւորին Յայոց Արշակայ: 3 Ապա գնային հասանէին ի մի վայր ամենայն զաւրթն Յայաստան երկրին եւ Վասակ զաւրավարն սպարապետն, որ եր դայեակ թագաւորին Յայոց Արշակայ: 4 Եթէ կարի շատ աճապարեալ հասանէին, այնչափ ժամանեցին՝ մինչեւ ի Մաղխազան կարացին հասանել: 5 Եւ անդ ընդ միմեանս գունդն երկոքեան բախէին. ի պարտութիւն մատնեցան զաւրթն Պարսից, փախստական լինէին յերեսաց Վասակայ զաւրավարին եւ ամենայն զաւրացն Յայոց: 6 Եւ սպանանէին անդ զՄոգաց անդերձապետն, եւ զգաւրսն անմի արարեալ. բայց միայն Մերուժանն ի տաճիկ ձի նստեալ՝ փախչէր:

ԳԼՈՒԽ ԽԸ.

1 Յաղագս Յամբարակապետին, որ իննսուն բիւրուն եկեալ մարտնչէր ընդ զաւրս թագաւորին Յայոց. եւ սատակեցաւ ի Սաղամաս ի զաւրացն Յայոց, եւ ի զաւրավարէն Վասակայ:

2 Ապա Յամբարակապետն² թագաւորին Պարսից, եւ սա գայր հասաներ ի գաւառն Կորճէից ի Սաղամաս հանդերձ իննսուն բիւրաւք: 3 Եւ ղակիչ ածեալ յամուր տեղուջ միոջ, կամեր կռուել ընդ թագաւորին Յայոց ընդ Արշակայ: 4 Ապա գայր զաւրավարն Յայոց, հանդերձ տասն հազարաւ զինու ընտիր զաւրու. եւ դարանամուտ լինէր ընդ կողմանս բանակին, եւ ի գիշերին անկաներ ի ղակիչն: 5 Եւ զամենեսեան ընդ սուր հանէին առ հասարակ, եւ ոչ

1 *Օրինակ մի չուկի*՝ ի տաճիկ ձի նստեալ

2 *Օրինակ մի*՝ համբարապետն